ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ՀՀԿԳՄՄՆԷԱՃԱՊՁԲ-25/63» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով թվով դպրոցական կահույքի (5 դպրոցների համար) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **13.06.2025թ**

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Անահիտ Հակոբյան

Ցոլակ Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Մելքոնյան

1. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին.

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀԿԳՄՄՆԷԱՃԱՊՁԲ-25/63» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից «Աքսել» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով 05.06.2025թ ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրերի նախագծերը, սակայն վերջիններս «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում (մինչև 2025 թվականի հունիսի 12-ը ներառյալ) չեն ներկայացրել ստորագրված պայմանագրերը, որակավորման ու պայմանագրի ապահովումները, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մաս կազմող Տխնիկական-առաջադրանքները:

1.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ զրկել պայմանագիր կնքելու իրավունքից.

«ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ -ին՝ 1-ին չափաբաժնի մասով,

«Աքսել» ՍՊԸ -ին՝ 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.3 Առաջնորդվելով սույն արձանագրության 1.2 կետով և ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետով, գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա, պայմանագիր չկնքելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.4 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին

հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ-ին և «Աքսել» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագծեր:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Մկրտչյան

---------- Անահիտ Հակոբյան

---------- Ցոլակ Հակոբյան

---------- Արսեն Մելքոնյան /քարտուղար/